ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 6

Ք. Երևան, 30 դեկտեմբերի 2019 թվական

Հայաստանի Հանրապետության սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի (ՍԱՏՄ) կառավարման խորհրդի (Խորհուրդ) էլեկտրոնային քվեարկության ներկայացված հարցերի վերաբերյալ

Էլեկտրոնային քվեարկությանը մասնակցել են՝

Տ. Խաչատրյան – ՀՀ էկոնոմիկայի նախարար (խորհրդի նախագահ)
Ա. Թորոսյան – ՀՀ առողջապահության նախարար (խորհրդի անդամ)
Ա. Ասոյան – ՀՀ վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակի ղեկավար (խորհրդի անդամ)
Ա. Պողոսյան – ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալ (խորհրդի անդամ)
Տ. Գաբրիելյան – ՀՀ էկոնոմիկայի նախարարի տեղակալ (խորհրդի անդամ)
Ռ. Գրիգորյան – ՀՀ արդարադատության նախարարի առաջին տեղակալ(խորհրդի անդամ)
Մ. Բեգլարյան – ՀՀ ԳԱԱ էկոլոգանոոսֆերային հետազոտությունների կենտրոնի սննդի շղթայի ռիսկերի գնահատման տեղեկատվական վերլուծական կենտրոնի փորձագիտական խմբի ղեկավար (խորհրդի անդամ)
Ա. Պետրոսյան - <<ՓՄՁ համագործակցության ասոցիացիա>> ՀԿ կառավարման խորհրդի անդամ (խորհրդի անդամ)
Ա. Առաքելյան – ՀՀ ԳԱԱ-ի Մոլեկուլային կենսաբանության ինստիտուտի տնօրեն, ավագ գիտաշխատող (խորհրդի անդամ)

«Տեսչական մարմինների կառավարման խորհուրդների անդամների առաջադրման, խորհուրդների անդամ՝ հասարակական և գիտական կազմակերպությունների ներկայացուցիչներին ներկայացվող ընդհանուր պահանջները և թեկնածուներից խորհրդի անդամներ ընտրելու օրինակելի կարգը, տեսչական մարմինների կառավարման խորհուրդների աշխատակարգի օրինակելի ձևը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության 08.08.2019թ. թիվ 1000-Ն որոշման Հավելված 2-ի 19-րդ կետի համաձայն՝ էլեկտրոնային քվեարկության է ներկայացվել ՍԱՏՄ 2020 թվականի գործունեության տարեկան ծրագրի նախագծի լրամշակված տարբերակը:

1. **ՀՀ սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի 2020 թվականի գործունեության տարեկան ծրագրի նախագիծը հաստատելու մասին**

Էլեկտրոնային քվեարկությանը մասնակցած Խորհրդի անդամների 8 կողմ ձայներով որոշվեց՝ .

1) *Հաստատել ՍԱՏՄ 2020 թվականի գործունեության տարեկան ծրագիրը (հիմք՝ «Տեսչական մարմինների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածի 7-րդ մասի 1-ին կետ, 1000-Ն որոշման 35-րդ կետ, 2-րդ ենթակետ):*
2) *Հանձնարարել ՍԱՏՄ ղեկավար Գ. Ավետիսյանին՝ սահմանված կարգով հրապարակել պաշտոնական կայքում (հիմք՝ «Տեսչական մարմինների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածի 8-րդ մաս):*

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ Տ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

ԽՈՐՀՐԴԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ Ս. ՍԱՀԱԿՅԱՆ